



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2025 թվականի դեկտեմբերի 4-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Ընդունելի գիտություն, որ՝

1. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի համախմբված բյուջեն գնահատվում է՝

1) եկամուտների գծով՝ 3,275.1 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումներից ստացվող մուտքերի),

2) ծախսերի գծով՝ 3,811.9 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումների),

3) դեֆիցիտը (պակասուրդը)՝ 536.8 մլրդ դրամ.

2. Հայաստանի Հանրապետության համայնքների 2026 թվականի բյուջեները գնահատվում են՝

1) եկամուտների գծով՝ 360.6 մլրդ դրամ (ներառյալ պետական բյուջեից ստացվող պաշտոնական դրամաշնորհները),

2) ծախսերի գծով՝ 360.6 մլրդ դրամ:

Հոդված 2. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեն՝

	Գումարը (հազար դրամներով)
1. Եկամուտների գծով	3,090,858,951.3
2. Ծախսերի գծով	3,627,620,571.1
3. Դեֆիցիտը (պակասուրդը)	536,761,619.8

Հողված 3. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորմանն ուղղել միջոցներ հետևյալ աղբյուրներից.

Պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները	Գումարը (հազար դրամներով)
ԸՆԴԱՄԵՆԸ	
այդ թվում՝	536,761,619.8
Ա. Ներքին աղբյուրներ	210,049,083.3
Բ. Արտաքին աղբյուրներ	326,712,536.5

Հողված 4. Կենտրոնական բանկին՝ 2026 թվականի ընթացքում, օրենքով վերապահված իրավասությունների սահմաններում, դրամավարկային քաղաքականության վերաբերյալ որոշումներ ընդունելիս առաջնորդվել 12-ամսյա գնաճի 3 տոկոս նպատակային՝ ± 1.0 տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքում ցուցանիշով:

Հողված 5. Հայաստանի Հանրապետության կառավարությանը և Կենտրոնական բանկին՝ Կենտրոնական բանկի կողմից պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորումը 2026 թվականի բյուջետային տարվա ընթացքում իրականացնել բացառապես «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքով սահմանված կարգով:

Հողված 6. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի եկամուտները, ըստ ձևավորման աղբյուրների դասակարգման առանձին խմբերի, հետևյալ չափերով.

Պետական բյուջեի եկամուտները	Գումարը (հազար դրամներով)
ԸՆԴԱՄԵՆԸ	3,090,858,951.3
այդ թվում՝	
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	2,972,850,760.2
Պաշտոնական դրամաշնորհներ	19,731,834.7
Այլ եկամուտներ	98,276,356.4

Հողված 7. Սահմանել, որ՝

1. 2027 թվականի հունվար ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ Կառավարություն) չի շարունակի 2026 թվականի բյուջետային տարվա պարտավորությունների գծով գործառնությունների ձևակերպումների իրականացումը.

2. 2026 թվականի ընթացքում առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) Հայաստանի Հանրապետության դրամով ստացվող միջոցները մուտքագրվում են գանձապետական միասնական հաշվի սեփականաշնորհման հատուկ ենթահաշվին, իսկ արտարժույթով ստացվող միջոցները փոխարկվում են Կենտրոնական բանկում և մուտքագրվում գանձապետական միասնական հաշվի սեփականաշնորհման հատուկ ենթահաշվին.

3. 2026 թվականին պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը կազմում է 83 200 դրամ.

4. յուրաքանչյուր մարմնի պետական ծառայողների տարեկան պարգևատրման ֆոնդի միասնական տոկոսային դրույքաչափը կազմում է այդ մարմնի գծով Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ պետական ծառայողների հիմնական աշխատավարձի տարեկան ֆոնդի 10 տոկոսը.

5. համայնքների բյուջեներին «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 86-րդ հոդվածով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 73-րդ հոդվածով եկամտային հարկից և շահութահարկից նախատեսված մասհանումները 2026 թվականի բյուջետային տարում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից չեն կատարվում.

6. համայնքների բյուջեներին «Ֆինանսական համահարթեցման մասին» օրենքով սահմանված կարգով ֆինանսական համահարթեցման դոտացիաներ տրամադրելու համար «ա» մասով մինչև 3500 բնակիչ ունեցող յուրաքանչյուր համայնքի հատկացվում է 50.0 միլիոն դրամ, իսկ սահմանամերձ յուրաքանչյուր բնակավայրի հատկացվում է 5.0 միլիոն դրամ.

7. համայնքների բյուջեներին «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի

բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» օրենքով նախատեսված եկամուտների կորուստների փոխհատուցումը 2026 թվականի բյուջետային տարում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից չի կատարվում.

8. քաղաքացիաիրավական հարաբերություններից ծագած պարտքի դիմաց պետական մարմնի և պետական կառավարչական հիմնարկի ձեռք բերած գույքի իրացումից մուտքերը հաշվեգրվում են այն հաշիվներին, որտեղ պետք է հաշվեգրվեր տվյալ պարտքի գումարը.

9. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքում Կառավարության ընդունած որոշումը չի կարող վերաբերել սույն օրենքով նախատեսված ելքերի (բացառությամբ դրանց գծով, ըստ Կառավարության կանխատեսումների, 2026 թվականին սպասվող տնտեսման գումարների) հետևյալ ուղղություններին.

- 1) պետական ներքին և արտաքին պարտքի մարում և սպասարկում,
- 2) սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ,
- 3) պետական բյուջեից տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների գծով հատկացումներ,
- 4) միջազգային պայմանագրերով տվյալ տարվա համար Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններ (բացառությամբ պետական պարտքի մարման և սպասարկման), որոնց չկատարումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության նկատմամբ այդ պայմանագրերով նման դեպքերի համար նախատեսված էական ֆինանսական և այլ պահանջների առաջացման.

10. պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների (այսուհետ սույն մասում՝ մատակարարի) կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից Կառավարության որոշումների հիման վրա գույքն առանձնացնելիս գույքն ստացող պետական մարմինը կամ պետական կառավարչական հիմնարկը պարտավոր է տվյալ մատակարարին վճարել նշված գործարքի շրջանակում վերջինիս ներկայացրած հարկային հաշվում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարը (մատակարարը

շրջանառության հարկ վճարող հանդիսանալու դեպքում՝ շրջանառության հարկի գումարը), ինչպես նաև գույքի ավելացված արժեքի հարկը չներառող օտարման արժեքի և հարկային հաշվառմամբ մնացորդային արժեքի դրական տարբերությունից հաշվարկվող և մատակարարի տարեկան գործունեության արդյունքում առաջացող՝ պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարի մեջ ներառվող շահութահարկի գումարը՝ մատակարարի անունից վճարումը կատարելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված միասնական հաշվին՝ որպես մատակարարի պարտավորության կատարում ավելացված արժեքի հարկի և շահութահարկի գծով կամ շրջանառության հարկի գծով.

11. պետական մարմինների համար «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 1.2-րդ հոդվածի 16-րդ մասի «ա» կետում նշված նպատակով բացված արտաբյուջետային հաշիվներից ֆինանսավորվող ծախսային (ելքային) ծրագրերի գծով սույն օրենքով չնախատեսված ելքերի ֆինանսավորման նպատակով ստացվելիք 2026 թվականի բյուջետային տարվա եկամուտների գումարների չափով ենթակա են ավելացման սույն օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների գումարները, ծախսերի նախահաշվային գումարների չափով՝ սույն օրենքի 2-րդ հոդվածով և սույն օրենքի N 1 հավելվածով հաստատված բյուջետային ծախսերի համապատասխան գումարները (ֆինանսավորվող ծրագրերը և միջոցառումները և դրանց գծով նախատեսվող ծախսերը՝ որպես առանձին լրացուցիչ ծրագրեր և (կամ) միջոցառումներ արտացոլելով սույն օրենքի N 1 հավելվածի համապատասխան աղյուսակներում), իսկ եկամուտների և ծախսերի նախահաշվային գումարների դրական կամ բացասական տարբերության չափով՝ համապատասխանաբար պակասեցման կամ ավելացման, սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարը և սույն օրենքի 3-րդ հոդվածով և սույն օրենքի N 3 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց տարրերի (մուտքային և (կամ) ելքային) համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում).

12. պետական մարմիններին պատկանող գույքի, ներառյալ ավտոտրանսպորտային միջոցների վնասման դեպքում Հայաստանի

Հանրապետության պետական բյուջե փոխանցված հատուցման գումարի սահմաններում պետական մարմինները այդ միջոցների հաշվին իրականացնում են պետական գույքի վերանորոգման աշխատանքներ՝ այդ գումարներն արտահայտելով Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունների ծախսային մասում որպես պետական բյուջեից (Կառավարության պահուստային ֆոնդից) հիմնարկներին կատարված հատկացումներ, իսկ եկամուտներում՝ որպես այլ եկամուտ.

13. 2026 թվականին շարունակվում է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների՝ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրումը՝ «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 9-րդ մասով հաստատված ծրագրի շրջանակներում հաշվառված անձանց մասով՝ այդ ծրագրին համապատասխան (հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջը).

14. 2026 թվականին շարունակվում է սույն օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի ծրագրային դասակարգման N 1184 ծրագրի N 12001 ««ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների՝ որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում» միջոցառմամբ նախատեսված հատկացումների հաշվին նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց՝

1) փոխհատուցման արտահերթ տրամադրումը Հայրենական մեծ պատերազմի վետերաններին՝ «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 8 հավելվածի 4-րդ կետով սահմանված սանդղակին համապատասխան՝ Կառավարության սահմանած կարգով,

2) փոխհատուցման տրամադրումը «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 8 հավելվածի 4-րդ կետով

սահմանված սանդղակին համապատասխան՝ մինչև 1944 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակից կամ մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող՝ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված անձանց, ինչպես նաև Կառավարության սահմանած այլ սոցիալական խմբերին՝ Կառավարության սահմանած կարգով.

15. յուրաքանչյուր տարի Կառավարության սահմանած կարգով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների՝ որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց նախորդ տարում փոխհատուցում ստացած ավանդատուների ավանդային գրքույկներում առկա գումարը (ռուբլով), որի նկատմամբ հաշվարկվել է փոխհատուցման գումարը, համարվում է մարված.

16. «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների կողմից նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ այդ փոխհատուցումն ստացած անձանց ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացողների ցուցակներից հանելու համար.

17. այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարման ընթացքում անհրաժեշտություն է առաջանում պետական բյուջեով նախատեսել (կատարել) հատկացումներ այնպիսի ծախսերի կատարման համար, որոնք անմիջականորեն նշանակված են սույն օրենքով չնախատեսված եկամուտների գումարները պետական բյուջե վճարելու համար, ապա այդ գումարների չափով ենթակա են ավելացման սույն օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների գումարները: Նման դեպքում, սույն մասում նշված եկամուտների գումարների վճարման աղբյուր հանդիսացող բյուջետային ծրագրերի միջոցառումների (ելքերի) պատկանելությանը

համապատասխան, փոփոխության են ենթակա սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված բյուջետային հատկացումների գումարները և սույն օրենքի N 1 հավելվածով նախատեսված կամ նույն հավելվածում լրացվող՝ սույն մասում նշված եկամուտների գումարների վճարման աղբյուր հանդիսացող որևէ ծախսային ծրագրի և միջոցառման գծով սահմանված հատկացումները՝ դրանց օգտագործումն իրականացնելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան.

18. սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված բյուջետային ծախսերի հանրագումարի՝ սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով թույլատրվող ավելացումները կատարվում են պայմանով, որ դրա հետևանքով սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված բյուջետային ծախսերի հանրագումարի աճը 2026 թվականի բյուջետային տարվա արդյունքներով չի գերազանցի սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված բյուջետային ծախսերի հանրագումարի 10 տոկոսը (սույն մասի գործողությունը չի տարածվում սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ և 18-րդ մասերով, ինչպես նաև սույն հոդվածի 11-րդ և 17-րդ մասերով նախատեսված դեպքերի վրա).

19. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից դրամաշնորհներն իրավաբանական անձանց տրամադրվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված մրցույթի ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջոցների հաշվին ծրագրերի և միջոցառումների իրականացումը կարող է իրականացվել միայն կոնկրետ իրավաբանական անձի միջոցով՝ բացառիկության հանգամանքով պայմանավորված: Ընդ որում, առանց մրցույթի իրավաբանական անձին դրամաշնորհի տրամադրումն իրականացվում է Կառավարության որոշմամբ.

20. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիաներն իրավաբանական անձանց հատկացվում են Կառավարության որոշումների հիման վրա.

21. սույն օրենքի որևէ հավելվածում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 23-րդ հոդվածին և սույն օրենքի 7-րդ և 9-րդ հոդվածներին համապատասխան թույլատրվող վերաբաշխումները,

փոփոխությունները և (կամ) լրացումները կատարելիս դրանք ըստ պատկանելության ենթակա են արտացոլման նաև սույն օրենքի մյուս հավելվածներում և դրանց համապատասխան աղյուսակներում.

22. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով (այսուհետ սույն մասում՝ պետական բյուջե) նախատեսված՝ Կառավարության պահուստային ֆոնդից կատարվող հատկացումների գումարների չափով նվազեցվում են պետական բյուջեով նախատեսված «Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդ» ծրագրով սահմանված հատկացումները և ավելացվում, ըստ նշված հատկացումների հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի պատկանելության, պետական բյուջեով նախատեսված այլ ծրագրերով սահմանված հատկացումները, և այդ փոփոխությունները Կառավարությունն արտացոլում է սույն օրենքի համապատասխան հավելվածների աղյուսակներում.

23. սույն հոդվածի 22-րդ մասով նախատեսված փոփոխությունները, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով, բյուջետային հատկացումների վերաբաշխումներ չեն համարվում.

24. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից տրամադրվող դրամաշնորհների և սուբսիդիաների նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների: Եթե սույն մասում նշված հոդվածներով նախատեսված ծրագրերը և միջոցառումները ենթակա չեն ավելացված արժեքի հարկով հարկման կամ ենթակա են հարկման պետական բյուջեից ավելացված արժեքի հարկի վճարման համար տրամադրվող գումարի դիմաց ավելի փոքր գումարի չափով, ապա նշված հարկի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումարները 2026 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

25. սույն օրենքի N 6 հավելվածում ներառված ծախսային ծրագրերը դիտարկվում են որպես առաջնահերթություն, և Հայաստանի Հանրապետության 2026

թվականի պետական բյուջեում լրացուցիչ ֆինանսական միջոցների առկայության պայմաններում (Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման բարենպաստ միջավայրի և այլ գործոններով պայմանավորված), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի սահմանաչափի ավելացման պարագայում այդ ծրագրերի ֆինանսավորումը պետք է իրականացվի առաջնահերթ կարգով, կապիտալ ծախսերի համար հիմք ընդունելով համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա այդ աշխատանքների արժեքների ճշգրտումները:

Հոդված 8. Հաստատել՝

1. սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված բյուջետային ծախսերի գծով հատկացումները՝ ըստ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների և այդ մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների՝ սույն օրենքի N 1 հավելվածի համաձայն.

2. համայնքների բյուջեներին օրենքով սահմանված կարգով ֆինանսական համահարթեցման դոտացիաներ տրամադրելու համար սույն օրենքի N 1 հավելվածով նախատեսված հատկացումների բաշխումը՝ ըստ առանձին համայնքների՝ սույն օրենքի N 2 հավելվածի համաձայն.

3. սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները (ըստ առանձին տարրերի) և ֆինանսական ակտիվների ձեռքբերումների և ներգրավված փոխառու միջոցների մարումների գծով ծրագրերն ու միջոցառումները՝ սույն օրենքի N 3 հավելվածի համաձայն.

4. Կենտրոնական բանկի՝ 2026 թվականի վարչական ծախսերի նախահաշիվը՝ 12,060,602.0 հազար դրամ, սույն օրենքի N 4 հավելվածի համաձայն, և կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակը՝ 8,113,586.0 հազար դրամ.

5. 2026 թվականի համար սահմանվող ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) պարտադիր վճարների և ռադիոհաճախականության օգտագործման վճարների չափերը՝ սույն օրենքի N 5 հավելվածի համաձայն.

6. սույն օրենքի 7-րդ հոդվածի 25-րդ մասով նախատեսված առաջնահերթ իրականացման ենթակա բյուջետային ծախսային ծրագրերը՝ սույն օրենքի N 6 հավելվածի համաձայն:

Հոդված 9. Թույլատրել Կառավարությանը անհրաժեշտության դեպքում՝

1. փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարել սույն օրենքի N 1 հավելվածով սահմանված պետական մարմինների ցանկերում.

2. սույն մասով սահմանված դեպքերում կատարված ծախսերը և ստացված եկամուտներն արտահայտելով Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններում և այդ գումարների չափով ավելացնելով սույն օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների և ծախսերի (դրանք արտացոլելով նաև սույն օրենքի N 1 հավելվածում՝ անհրաժեշտության դեպքում՝ որպես ծախսային ծրագրերի առանձին լրացուցիչ միջոցառումներ կամ լրացուցիչ ծրագրերի միջոցառումներ) գումարները՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից առանց սահմանափակման իրականացնել՝

1) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից դատարան հայցադիմումներ, դիմումներ ու գանգատներ, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս, ինչպես նաև դատարանի կողմից տրամադրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված վճարումները, ինչպես նաև դատական ակտերի հիման վրա հոգուտ պետական բյուջեի պետական մարմիններից բռնագանձված պետական տուրքի գումարների վճարումները,

2) «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքին համապատասխան՝ ոչ կառավարչական բնույթի գործունեություն իրականացնող պետական (բյուջետային) հիմնարկների՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպման նպատակով Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրում պետական գրանցման, կնիքների պատրաստման թույլտվության, ինչպես նաև կազմակերպությանը սեփականության կամ օգտագործման իրավունքով հանձնված

գույքի նկատմամբ իրավունքների գրանցում կատարելու համար՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված վճարումները,

3) սոցիալական ապահովության մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամություն ունեցող անձանց վարորդական իրավունքի վկայական և ավտոմեքենայի պետական համարանիշ տալու, ինչպես նաև ավտոմեքենայի գրանցման ու վերագրանցման համար՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված վճարումների գծով այդ հաշմանդամություն ունեցող անձանց փոխարեն, նշված օրենքի 31-րդ հոդվածի պահանջների համաձայն, Կառավարության կողմից կատարվող ծախսերը,

4) «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված դեպքերում պետական մարմիններից բռնագանձման ենթակա կատարողական ծախսի գումարների վճարումները.

3. սույն մասով սահմանված դեպքերում կատարված ծախսերն արտահայտելով Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններում և այդ գումարների չափով ավելացնելով սույն օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների և ծախսերի (դրանք արտացոլելով նաև սույն օրենքի N 1 հավելվածում՝ անհրաժեշտության դեպքում՝ որպես ծախսային ծրագրերի առանձին լրացուցիչ միջոցառումներ) գումարները՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից առանց սահմանափակման իրականացնել՝

1) Հայաստանի Հանրապետության հարկային կամ մաքսային մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում և պետական հիմնարկներում օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված ստուգումների և վերստուգումների արդյունքում հարկերի և այլ պարտադիր վճարների գծով առաջադրված լրացուցիչ պարտավորությունների մարման համար անհրաժեշտ վճարումները,

2) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների (այսուհետ սույն կետում՝ մատակարարի) կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գույք առանձնացնելիս գույքն ստացող պետական մարմնի կողմից նշված գործարքի

շրջանակում տվյալ մատակարարին վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի և շահութահարկի գծով կամ շրջանառության հարկի գծով պարտավորության կատարման գծով ծախսերը.

4. պետական սեփականություն համարվող գույքը հիմնադրամներին վարձակալության հանձնելիս հաշվարկված վարձակալական վճարները Կառավարության սահմանած դեպքերում թողնել հիմնադրամների տնօրինությանը՝ որպես Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրամներում կատարվող կամավոր գույքային վճար՝ առանց սահմանափակման, այդ գումարներն արտահայտելով Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունների ծախսային մասում՝ որպես պետական բյուջեից (Կառավարության պահուստային ֆոնդից) հիմնադրամներին կատարված հատկացումներ, իսկ եկամուտներում՝ որպես այդ հիմնադրամների կողմից նույն գումարների չափով պետական բյուջե մուծված վարձակալական վճարների ստացում (եթե նշված վարձակալական վճարները նախատեսված չեն Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի եկամուտների կազմում, ապա այդ գումարների չափով ավելացնել սույն օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների և ծախսերի գումարները, այդ թվում՝ Կառավարության պահուստային ֆոնդը).

5. բյուջետային տարվա առանձին ժամանակահատվածներում պետական բյուջեում սույն օրենքի համաձայն՝ բյուջետային ելքերի ֆինանսավորման համար միջոցների անբավարարության առաջացման դեպքում ժամանակավորապես, մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը վերականգնելու պայմանով, ներգրավել առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) ստացված միջոցների կուտակման նպատակով բացված գանձապետական միասնական հաշվի սեփականաշնորհման հատուկ ենթահաշվում միջոցների առկա մնացորդի՝ սույն օրենքով նախատեսված բյուջետային ելքերի ֆինանսավորմանը չուղղված գումարը՝ ներկայացնելով այդ ենթահաշվի շարժը Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններում (առանձին հավելվածով).

6. սույն օրենքի 6-րդ հոդվածով բյուջետային եկամուտների՝ ըստ դրանց ձևավորման («Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում նշված) առանձին աղբյուրների գծով սահմանված համապատասխան գումարները պետական բյուջեի կատարման ընթացքում գերազանցած՝ լրացուցիչ ստացված եկամուտների գումարի չափով ավելացնել սույն օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների գումարները, ինչպես նաև, ըստ այդ եկամուտների հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի պատկանելության, համապատասխան փոփոխության ենթարկել բյուջետային ծախսերի ֆինանսավորման համար սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված բյուջետային հատկացումների գումարները և սույն օրենքի N 1 հավելվածով նախատեսված կամ նույն հավելվածներում լրացվող որևէ ծախսային ծրագրի և միջոցառման գծով սահմանված հատկացումները և (կամ) սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի), սույն օրենքի 3-րդ հոդվածով և սույն օրենքի N 3 հավելվածով սահմանված դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում)՝ դրանց օգտագործումն իրականացնելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան: Սույն մասի գործողությունը չի տարածվում սույն հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 10-րդ և 13-րդ մասերով, ինչպես նաև սույն օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ և 17-րդ մասերով նախատեսված դեպքերի վրա:

7. բյուջետային տարվա արդյունքներով գերազանցել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) գումարը՝ ներքին և արտաքին աղբյուրներից բյուջետային վարկերի վերադարձից ստացված՝ սույն օրենքի N 3 հավելվածով այդ մուտքի գծով նախատեսված մակարդակը գերազանցած գումարից ոչ ավելի չափով (նույն չափով ավելացնելով սույն օրենքի N 3 հավելվածով նախատեսված բյուջետային վարկերի վերադարձից գումարը), և, ըստ այդ գումարի հաշվին կատարվելիք ելքերի պատկանելության, համապատասխան փոփոխության ենթարկել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված ծախսերի և դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր

գումարները, սույն օրենքի 3-րդ հոդվածով և սույն օրենքի N 3 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում) և ֆինանսական ակտիվների ձեռքբերումների ու ներգրավված փոխառու միջոցների մարումների գծով ծրագրերն ու միջոցառումները, ինչպես նաև սույն օրենքի N 1 հավելվածով նախատեսված կամ նույն հավելվածներում լրացվող որևէ ծախսային ծրագրի և միջոցառման գծով սահմանված հատկացումները, և դրանց օգտագործումն իրականացնել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան.

8. բյուջետային տարվա արդյունքներով գերազանցել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) գումարը՝ ներքին և արտաքին աղբյուրներից ստացված փոխառությունների՝ սույն օրենքի N 3 հավելվածով նախատեսված մարումների գծով առաջացող (այդ թվում՝ նաև փոխատուի համաձայնությամբ մարումը չկատարելու դեպքում առաջացող) տնտեսումների գումարից ոչ ավելի չափով (այդ գումարի չափով նվազեցնելով սույն օրենքի N 3 հավելվածով նախատեսված փոխառությունների մարումների գումարը), և, ըստ այդ տնտեսված գումարի հաշվին կատարվելիք ելքերի պատկանելության, համապատասխան փոփոխության ենթարկել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված ծախսերի և դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարները, սույն օրենքի 3-րդ հոդվածով և սույն օրենքի N 3 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում) և ֆինանսական ակտիվների ձեռքբերումների և ներգրավված փոխառու միջոցների մարումների գծով ծրագրերն ու միջոցառումները, ինչպես նաև սույն օրենքի N 1 հավելվածով նախատեսված կամ նույն հավելվածներում լրացվող որևէ ծախսային ծրագրի և միջոցառման գծով սահմանված հատկացումները, և դրանց օգտագործումն իրականացնել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան.

9. բյուջետային տարվա ընթացքում, պահպանելով սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված բյուջետային եկամուտների ընդհանուր գումարը, բյուջետային եկամուտների ձևավորման («Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում նշված) առանձին աղբյուրների դասակարգման խմբերի միջև կատարել դրանց գծով՝ սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված համապատասխան գումարների վերաբաշխումներ՝ դրանից բխող համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելով սույն օրենքի N 1 հավելվածի համապատասխան աղյուսակներում.

10. սույն օրենքի 6-րդ հոդվածով հաստատված եկամուտների կազմում չնախատեսված և պետական բյուջե մուտքագրված նվիրաբերված գումարները՝ ըստ նվիրաբերողի որոշած ուղղությունների, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն օգտագործելու դեպքում այդ գումարների չափով ավելացնել սույն օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածներով հաստատված բյուջետային եկամուտների գումարները և, ըստ այդ եկամուտների հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի պատկանելության, փոփոխության ենթարկել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված բյուջետային ծախսերի համապատասխան գումարներն ու սույն օրենքի N 1 հավելվածով նախատեսված՝ սույն մասում նշված եկամուտների հաշվին ֆինանսավորվող համապատասխան ծախսային ծրագրերի և միջոցառումների գծով սահմանված հատկացումները և (կամ) սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասորդի) և սույն օրենքի 3-րդ հոդվածով, ինչպես նաև սույն օրենքի N 3 հավելվածով հաստատված դեֆիցիտի (պակասորդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները (եթե սույն մասում նշված եկամուտների հաշվին ֆինանսավորվող ծրագրերը և (կամ) միջոցառումները նախատեսված չեն սույն օրենքի N 1 և (կամ) N 3 հավելվածներով, ապա դրանք, որպես առանձին լրացուցիչ ծրագրեր և (կամ) միջոցառումներ, ըստ պատկանելության արտացոլել նշված հավելվածների՝ այդ ծրագրերին համապատասխանող բաժիններում).

11. բյուջետային ելքերի ֆինանսավորման համար 2026 թվականի բյուջետային տարվա ընթացքում պետական բյուջեում միջոցների անբավարարության

առաջացման դեպքում դրանց ֆինանսավորմանն ուղղել առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) և պետական արժեթղթերի իրացումից ստացված միջոցների՝ սույն օրենքով նախատեսված բյուջետային ելքերի ֆինանսավորման համար չնախատեսված գումարները, ինչպես նաև սույն օրենքի 3-րդ հոդվածով հաստատված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրների կազմում չնախատեսված, սակայն 2026 թվականի բյուջետային տարվա ընթացքում փաստացի ստացված վարկային գումարները.

12. Կառավարության կնքած՝ օրենքով սահմանված կարգով վավերացված կամ հաստատված միջազգային պայմանագրերին համապատասխան՝ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող վարկային և դրամաշնորհային նպատակային ծախսային ծրագրերի միջոցառումների (այսուհետ սույն մասում՝ նպատակային ծրագրեր) կատարման ընթացքին նպաստելու նպատակով՝

1) սույն օրենքի NN 1 և 3 հավելվածներով նախատեսված վարկային նպատակային ծրագրերը ֆինանսավորելիս (նշված ծախսերի ֆինանսավորման համապատասխան վարկային աղբյուրների առկայությամբ), չգործադրելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված բյուջետային հատկացումների վերաբաշխման մեխանիզմը և 19-րդ հոդվածի դրույթները, գերազանցել սույն օրենքի NN 1 և 3 հավելվածների համապատասխան աղյուսակներով սահմանված՝ արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկերի հաշվին իրականացվող առանձին նպատակային ծրագրերի գծով սահմանված հատկացումների գումարները, սույն օրենքի NN 1 և 3 հավելվածներով նախատեսված ծրագրերի և միջոցառումների գծով սահմանված հատկացումների ընդհանուր գումարը, ինչպես նաև սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված պետական բյուջեի ծախսերի և դեֆիցիտի (պակասուրդի) և սույն օրենքի 3-րդ հոդվածով ու սույն օրենքի N 3 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները, ինչպես նաև սույն օրենքի N 3 հավելվածում ներկայացված ֆինանսական ակտիվների ձեռքբերումների և

ներգրավված փոխառու միջոցների մարումների գծով ծրագրերի և միջոցառումների գծով սահմանված հատկացումները,

2) 2026 թվականի բյուջետային տարվա ընթացքում օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը հատկացված՝ սույն օրենքով չնախատեսված նպատակային վարկային կամ դրամաշնորհային միջոցների (այսուհետ սույն կետում՝ նպատակային միջոցների) հաշվին ֆինանսավորել սույն օրենքի N 1 և (կամ) N 3 հավելվածներով չնախատեսված նպատակային ծրագրերը: Այդ ծրագրերի գծով Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջե ստացվող նպատակային միջոցների հաշվին նախատեսվող ելքերի գումարից ոչ ավելի չափով, ըստ անհրաժեշտության, ավելացնել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարը (վարկային նպատակային ծրագրերի դեպքում) կամ եկամուտների գումարը (դրամաշնորհային նպատակային ծրագրերի դեպքում), ինչպես նաև, ըստ այդ գումարի բնույթի և վերջինիս հաշվին կատարվող ելքերի պատկանելության, համապատասխան փոփոխության ենթարկել սույն օրենքի 3-րդ հոդվածով և սույն օրենքի N 3 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց առանձին տարրերի համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում), սույն օրենքի 6-րդ հոդվածով հաստատված բյուջետային եկամուտների գումարները, ինչպես նաև սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված բյուջետային ծախսերի համապատասխան գումարները (սույն կետում նշված՝ սույն օրենքով չնախատեսված նպատակային ծրագրերը՝ որպես ծրագրերի առանձին լրացուցիչ միջոցառումներ, ըստ պատկանելության արտացոլելով սույն օրենքի N 1 և (կամ) N 3 հավելվածներում),

3) 2026 թվականի բյուջետային տարվա ընթացքում լրացուցիչ ֆինանսավորել սույն օրենքի N 1 և (կամ) N 3 հավելվածներով նախատեսված (ներառյալ սույն մասի 2-րդ կետով սահմանված կարգով բյուջետային տարվա ընթացքում սույն օրենքի N 1 և (կամ) N 3 հավելվածներում արտացոլված) նպատակային ծրագրերը՝ դրանց գծով օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից մինչև 2026 թվականի հունվարի 1-ը ստացված՝ սույն օրենքով չնախատեսված միջոցների

զօգտագործված մնացորդի հաշվին (այդ գումարի չափով ավելացնելով սույն օրենքի N 3 հավելվածով նախատեսված՝ ելքերի ֆինանսավորմանն ուղղվող պետական բյուջեի 2026 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցների գումարը), և, ըստ այդ միջոցների հաշվին կատարված ելքերի պատկանելության, համապատասխան փոփոխության ենթարկել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարը, սույն օրենքի 3-րդ հոդվածով և սույն օրենքի N 3 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց առանձին տարրերի համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում) և սույն օրենքի N 3 հավելվածով սահմանված ֆինանսական ակտիվների ձեռքբերումների և ներգրավված փոխառու միջոցների մարումների գծով ծրագրերը և միջոցառումները, ինչպես նաև սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված բյուջետային ծախսերի (նաև սույն օրենքի N 1 հավելվածով նախատեսված համապատասխան ծախսային ծրագրերի և միջոցառումների) համապատասխան գումարները, և դրանց օգտագործումն իրականացնել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան,

4) բյուջետային տարվա ընթացքում սույն օրենքի N 1 և (կամ) N 3 հավելվածներով նախատեսված (ներառյալ սույն մասի 2-րդ կետով սահմանված կարգով բյուջետային տարվա ընթացքում սույն օրենքի N 1 և (կամ) N 3 հավելվածներում արտացոլված) առանձին նպատակային ծրագրերով սույն օրենքով նախատեսված՝ Կառավարության համաֆինանսավորման հատկացումների գումարներն ավելացնելու կամ դրանք նախատեսելու անհրաժեշտության առաջացման դեպքում, եթե նշված ավելացումը կամ նախատեսումը հնարավոր չէ իրականացնել հատկացումների ծրագրերի և (կամ) միջոցառումների միջև վերաբաշխման եղանակով կամ Կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին՝ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման լրացուցիչ՝ սույն օրենքով չնախատեսված գումարների հայթայթման (առկայության) դեպքում, բյուջետային տարվա արդյունքներով գերազանցել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) գումարը՝ Կառավարության

համաֆինանսավորման համար անհրաժեշտ լրացուցիչ գումարից ոչ ավելի չափով (բայց դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման լրացուցիչ՝ սույն օրենքով չնախատեսված հայթայթված (առկա) գումարների սահմաններում), և, ըստ այդ գումարի հաշվին կատարվելիք ելքերի պատկանելության, համապատասխան փոփոխության ենթարկել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված ծախսերի և դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարները, սույն օրենքի 3-րդ հոդվածով և սույն օրենքի N 3 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում), ինչպես նաև սույն օրենքի N 1 հավելվածով և (կամ) N 3 հավելվածով նախատեսված համապատասխան նպատակային ծրագրի գծով սահմանված հատկացումները, և դրանց օգտագործումն իրականացնել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան,

5) սույն օրենքի NN 1 և 3 հավելվածներով նախատեսված դրամաշնորհային նպատակային ծրագրերը ֆինանսավորելիս (նշված ծախսերի ֆինանսավորման համապատասխան դրամաշնորհային աղբյուրների առկայությամբ), չգործադրելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված բյուջետային հատկացումների վերաբաշխման մեխանիզմը և 19-րդ հոդվածի դրույթները, գերազանցել սույն օրենքի NN 1 և 3 հավելվածների համապատասխան աղյուսակներով սահմանված՝ արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային դրամաշնորհների հաշվին իրականացվող առանձին նպատակային ծրագրերի գծով սահմանված հատկացումների գումարները, սույն օրենքի NN 1 և 3 հավելվածներով նախատեսված ծրագրերի և միջոցառումների գծով սահմանված հատկացումների ընդհանուր գումարը, ինչպես նաև սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված պետական բյուջեի ծախսերի և դեֆիցիտի (պակասուրդի) և սույն օրենքի 3-րդ հոդվածով ու սույն օրենքի N 3 հավելվածով սահմանված՝ պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները.

13. «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով նախատեսված, սակայն այդ տարում չստացված և սույն օրենքի 6-րդ հոդվածով հաստատված եկամուտների կազմում չնախատեսված պաշտոնական դրամաշնորհների գումարները 2026 թվականին ստանալու և 2025 թվականի արդյունքներով դրանց չստացման հետևանքով բյուջետային պարտքերի առաջացման դեպքում այդ գումարներն առաջնահերթության կարգով ուղղել այդ պարտքերի մարմանը.

14. բյուջետային տարվա ընթացքում, չգերազանցելով պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի)՝ սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված գումարը, վերաբաշխել պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման առանձին աղբյուրների, ինչպես նաև վերջիններիս առանձին տարրերի միջև դրանց գծով սույն օրենքի 3-րդ հոդվածով և սույն օրենքի N 3 հավելվածով հաստատված գումարները և (կամ) կատարել պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների հանրագումարի ավելացմանը չհանգեցնող այլ հաշվեկշռված փոփոխություններ և (կամ) լրացումներ՝ դրանցից բխող համապատասխան փոփոխություններ կատարելով սույն օրենքի N 1 և (կամ) N 3 հավելվածների համապատասխան աղյուսակներում (սույն մասի գործողությունը չի տարածվում սույն հոդվածի 22-րդ մասով նախատեսված դեպքերի վրա).

15. ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող մուտքերի՝ սույն օրենքով սահմանված գումարը պետական բյուջեի կատարման ընթացքում գերազանցած՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից լրացուցիչ ստացված մուտքերի չափով ավելացնել սույն օրենքի N 1 հավելվածով համապատասխան մուտքային ծրագրի գծով ոչ ֆինանսական ակտիվների օտարումից նախատեսված մուտքերի գումարը, ինչպես նաև, ըստ այդ մուտքերի հաշվին կատարվելիք բյուջետային ելքերի պատկանելության, համապատասխան փոփոխության ենթարկել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված և սույն օրենքի N 1 հավելվածով նախատեսված «Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդ» ծախսային ծրագրի (և (կամ) նույն հավելվածով նախատեսված որևէ այլ ծախսային ծրագրի միջոցառման) գծով սահմանված հատկացումները և (կամ) սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի), սույն օրենքի 3-րդ հոդվածով,

ինչպես նաև սույն օրենքի N 3 հավելվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում): Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող մուտքերի՝ սույն օրենքով սահմանված գումարը պետական բյուջեի կատարման ընթացքում գերազանցած՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից լրացուցիչ ստացված մուտքերի օգտագործումն իրականացնել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան.

16. սույն օրենքի N 1 հավելվածով նախատեսված որևէ ծախսային ծրագրի միջոցառման գծով սահմանված հատկացումների հաշվին բյուջետային վարկերի կամ փոխատվությունների տրամադրման կամ մարման, արժեթղթերի (ներառյալ բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության) գնման կամ մարման գծով գործառույթների իրականացման դեպքում նշված գումարների չափով նվազեցնել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված ծախսերի և դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարները և սույն օրենքի N 1 հավելվածով նախատեսված՝ տվյալ ծախսային ծրագրի և միջոցառման գծով սահմանված հատկացումների գումարը և դրանից բխող համապատասխան փոփոխություններ կատարել սույն օրենքի 3-րդ հոդվածով և փոփոխություններ և (կամ) լրացումներ՝ սույն օրենքի N 3 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց տարրերի համապատասխան գումարներում և կազմում, ինչպես նաև ֆինանսական ակտիվների ձեռքբերումների և ներգրավված փոխառու միջոցների մարումների գծով ծրագրերում և միջոցառումներում.

17. սույն օրենքով նախատեսված՝ յուրաքանչյուր պետական մարմնի կողմից իրականացվող ծրագրերի համար նախատեսված բյուջետային միջոցներն արդյունավետ, օգտավետ և (կամ) խնայողաբար կառավարելու արդյունքում առաջացող տնտեսումն ուղղել այդ պետական մարմնի աշխատակիցների պարգևատրմանը՝ ի հավելումն այլ օրենքներով սահմանված պարգևատրման պայմանների, այդ թվում՝ սահմանափակումների.

18. բյուջետային տարվա ընթացքում ավելացնել պետական մարմինների համար «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 1.2-րդ հոդվածի 16-րդ մասի «ա» կետում նշված նպատակով բացված արտաբյուջետային հաշիվներից ֆինանսավորվող ծրագրերի գծով սույն օրենքով հաստատված՝ 2026 թվականի ծախսերի (ելքերի) ֆինանսավորման գումարները մինչև 2026 թվականի հունվարի 1-ը ստացված՝ սույն օրենքով չնախատեսված գումարների սահմաններում՝ ծախսերի ավելացվող գումարների չափով ավելացնելով սույն օրենքի 2-րդ հոդվածով և սույն օրենքի N 1 հավելվածով հաստատված բյուջետային ծախսերի համապատասխան գումարները, ինչպես նաև սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարը և սույն օրենքի 3-րդ հոդվածով և սույն օրենքի N 3 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց տարրերի (մուտքային և (կամ) ելքային) համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում)։

19. բյուջետային տարվա ընթացքում Եվրոպական միությունից ստացված՝ սույն օրենքով չնախատեսված վարկային միջոցները պետական բյուջեում արտացոլման նպատակով համապատասխան փոփոխության ենթարկել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված դեֆիցիտի (պակասուրդի) ընդհանուր գումարը, սույն օրենքի 3-րդ հոդվածով և սույն օրենքի N 3 հավելվածով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման զուտ աղբյուրների և դրանց առանձին տարրերի համապատասխան գումարները (անհրաժեշտության դեպքում լրացում կատարելով այդ տարրերի կազմում) և փոփոխության ենթարկել սույն օրենքի 2-րդ հոդվածով հաստատված բյուջետային ծախսերի համապատասխան գումարներն ու սույն օրենքի N 1 հավելվածով նախատեսված՝ սույն մասում նշված վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվող համապատասխան ծախսային ծրագրերի և միջոցառումների գծով սահմանված հատկացումները (եթե սույն մասում նշված վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվող ծրագրերը և (կամ) միջոցառումները նախատեսված չեն սույն օրենքի N 1 և (կամ) N 3 հավելվածներով, ապա դրանք, որպես առանձին լրացուցիչ ծրագրեր և (կամ) միջոցառումներ, ըստ պատկանելության

արտացոլել նշված հավելվածների՝ այդ ծրագրերին համապատասխանող բաժիններում)։

20. անվտանգային մարտահրավերների դիմակայմանը, տնտեսական և սոցիալական հետևանքների մեղմմանը, համավարակի դեմ պայքարին, հիվանդության հետևանքների (այդ թվում՝ տնտեսական) չեզոքացմանը և վերացմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի «1236. Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի և առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի իրականացման նպատակով Կառավարության որոշումների հիման վրա բյուջետային վերաբաշխումներ կատարելիս գերազանցել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանաչափերը։

21. հաստատել պետության ներքին և արտաքին քաղաքականության բնագավառում Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին (մասնակի կամ ամբողջությամբ) իրականացվող ծրագրեր և միջոցառումներ։

22. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի՝ փաստացի ձևավորված տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին ֆինանսավորել կապիտալ ծախսերի գծով 2025 թվականին ստանձնված և սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական համակարգում հաշվառված, սակայն 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ փաստացի չիրականացված պայմանագրային պարտավորությունները։ Սույն դրույթները չեն տարածվում պաշտպանության ոլորտի կապիտալ ծախսերի վրա։ Տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին ֆինանսավորման ենթակա կապիտալ ծախսերի ընտրության և ֆինանսավորման կարգը սահմանում է Կառավարությունը։

Հոդված 10. Թույլատրել Կենտրոնական բանկին՝ անհրաժեշտության դեպքում վերաբաշխել սույն օրենքի N 4 հավելվածով սահմանված վարչական ծախսերը (ըստ ենթահոդվածների) այն պայմանով, որ թույլ չտրվի վարչական ծախսերի՝ սույն օրենքի N 4 հավելվածով սահմանված՝ յուրաքանչյուր հոդվածի գծով նախատեսված ծախսերի կրճատում՝ 15 տոկոսի, կամ ավելացում՝ 30 տոկոսի չափով։

Հոդված 11. Սույն օրենքի NN 1-6 հավելվածները համարվում են սույն օրենքի անբաժանելի մասերը:

Հոդված 12. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Վ. ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆ

ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի ծախսերն ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի

Ծրագրային դասիչը	Ծրագրի անվանումը	Գումարը (հազար դրամներով)
Ընդամենը		3,627,620,571.1
1001	Տարածքային կառավարման ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգի իրականացում	1,647,639.6
1002	ՀՀ Արագածոտնի մարզում տարածքային պետական կառավարում	450,364.5
1003	Հանրային առողջության պահպանում	7,496,403.8
1004	Ոռոգման համակարգի առողջացում	23,021,908.7
1005	Պարգևավճարներ և պատվովճարներ	10,500,200.0
1006	Պետական պարտքի կառավարում	419,962,320.9
1007	Տեսալսողական մեդիայի ոլորտի կարգավորում	374,380.4
1009	ՀՀ Արարատի մարզում տարածքային պետական կառավարում	428,614.5
1010	ՀՀ Արմավիրի մարզում տարածքային պետական կառավարում	459,173.1
1011	Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն	25,307,015.1
1012	Անշարժ գույքի կադաստրի վարման բնագավառում պետական քաղաքականության իրականացում	3,961,342.4
1013	Փորձաքննության ծառայություններ	610,968.3
1015	Սոցիալական փաթեթների ապահովում	9,600,000.0
1016	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ	4,215,628.8
1017	Որոտան-Արփա-Սևան թունելի ջրային համակարգի կառավարում	1,550,000.0
1018	Պետական հատվածի արդիականացման ծրագիր	4,672,510.1
1022	Գյուղատնտեսության խթանման ծրագիր	10,115,872.2
1023	Հարկային և մաքսային ծառայություններ	36,715,206.5
1024	ՀՀ Ազգային ժողովի լիազորությունների իրականացման ապահովում	7,003,612.6
1025	ՀՀ Գեղարքունիքի մարզում տարածքային պետական կառավարում	559,302.3
1027	Կոլեկտորադրենաժային ծառայություններ	300,000.0
1028	Տեխնիկական անվտանգության կանոնակարգում	276,000.0
1030	ՀՀ Լոռու մարզում տարածքային պետական կառավարում	528,815.3
1031	Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստում	36,483.7
1032	Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն	5,736,910.0
1033	Աջակցություն հասարակական և այլ կազմակերպություններին	78,813.0
1034	Տնտեսական մրցակցության պաշտպանություն	614,927.0
1036	Պետական պահպանության ապահովում	8,565,041.1
1037	ՀՀ Կոտայքի մարզում տարածքային պետական կառավարում	482,490.1
1038	Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մասնագիտական վերապատրաստում և հատուկ ուսուցում	14,594.2
1039	ՀՀ Շիրակի մարզում տարածքային պետական կառավարում	517,330.7
1040	Կոչտ թափոնների կառավարում	338,421.6
1041	Մեծ նվաճումների սպորտ	6,960,737.7

Ծրագրային դասիչը	Ծրագրի անվանումը	Գումարը (հազար դրամներով)
1042	Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում	8,293,170.2
1043	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր	22,010,859.2
1045	Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագիր	16,414,107.5
1047	ՀՀ Սյունիքի մարզում տարածքային պետական կառավարում	467,609.2
1049	Ճանապարհային ցանցի բարելավում	126,080,691.8
1050	Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում	301,467.6
1051	ՀՀ Վայոց ձորի մարզում տարածքային պետական կառավարում	420,234.7
1052	Քաղաքացիական կացության ակտերի գրանցում	156,433.2
1053	Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ծրագիր	1,719,372.9
1054	Միջուկային և ճառագայթային անվտանգության կարգավորում	716,434.0
1055	ՀՀ Տավուշի մարզում տարածքային պետական կառավարում	483,989.3
1056	Կինեմատոգրաֆիայի ծրագիր	1,376,635.9
1057	Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում, խորհրդատվության և մոնիտորինգի իրականացում	2,569,426.5
1058	Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	2,663,188.1
1059	Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն	1,534,002.1
1060	Մարդու իրավունքների պաշտպանություն	602,082.6
1061	Արտաքին գործերի ոլորտում Կառավարության քաղաքականության մշակում և իրականացում	3,374,087.1
1064	Հանրային ծառայությունների ոլորտի կարգավորում	1,249,508.5
1067	Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի	434,268.9
1068	Ժողովրդագրական վիճակի բարելավում	83,042,759.3
1071	Շրջակա միջավայրի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	2,254,228.2
1072	Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում	9,809,999.0
1073	Ընդերքի ուսումնասիրության, օգտագործման և պահպանման ծառայություններ	22,000.0
1075	Մշակութային ժառանգության ծրագիր	5,911,463.9
1077	Երկաթուղային ցանցի զարգացում	246,989.0
1079	Պետական գույքի կառավարում	(7,351,877.1)
1080	Դատական իշխանության գործունեության ապահովում և իրականացում	16,880,828.8
1082	Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում	25,987,044.0
1086	Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում	2,730,930.7
1087	Դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն	10,020,311.8
1088	Զբաղվածության ծրագիր	11,425,977.1
1089	Սեյսմիկ պաշտպանություն	747,956.2
1090	Փրկարարական ծառայություններ	14,070,326.5
1091	Հանրային իրազեկում	1,346,463.4
1092	ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում	912,367.5
